ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 26.02.2026 թ. կայացած նիստի թիվ 7 արձանագրություն

Օրակարգ.

1. 2025-2026 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցի հաստատում:
2. Մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում:
3. E-learning.ysu.am համակարգում համապատասխան դասընթացների լրացման արդյունքների ամփոփում:
4. 2025-2026 ուս. տարվա 2-րդ կիսամյակի համար պրոֆեսորի օգնականի հավակնորդների ցանկի հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

26.02.2026 թ. գիտական խորհրդի կայացած թիվ 7 նիստին 36 անդամներից ներկա էին 26-ը: Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեց օրակարգի առաջին հարցը՝2025-2026 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցը:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ տիկին Յաղուբյանը նշեց, որ կրթական երկու ծրագրերի շրջանակում /բակալավր և մագիստրատուրա/ արդյունքների առումով ամեն բան ընթացել է բնականոն հունով, ուսանողները կարողացան անկաշկանդ ներկայացնել իրենց ավարտական աշխատանքները և նրանցից շատերը ստացան գերազանց գնահատական:

Օրակարգի երրորդ հարցի՝ E-learning.ysu.am համակարգում համապատասխան դասընթացների լրացման արդյունքների ամփոփման հետ կապված նշվեց, որ ուսումնական պլանով դրված առաջադրանքը բոլոր ամբիոնները կատարել են, բայց անհրաժեշտություն է ծագել նաև, որ ծրագրերի բոլոր ղեկավարները անձամբ ստուգեն դասախոսների կողմից լրացրաց հարթակները և զեկուցագրերով հաստատեն դիտարկված արդյունքները:

Մ.Յաղուբյանը անդրադարձավ նաև օրակարգի չորրորդ հարցին՝ 2025-2026 ուս. տարվա 2-րդ կիսամյակի համար պրոֆեսորի օգնականի հավակնորդների ցանկի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ՝ ԵԼՀ ֆակուլտետի 2025-2026 ուս.տարվա երկրորդ կիսամյակում պրոֆեսորի օգնական երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵԼՀ ֆակուլտետի դեկանի Ժ/պ Մարինե Յաղուբյանը առաջարկեց Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի դասախոս Մարիամ Վարդանի Կարապետյանին նշանակել որպես նույն ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆեսոր Մարգարիտա Հրանտի Ապրեսյանի օգնական, ով հարկ եղած ժամանակ կփոխարինի բ.գ.թ., պրոֆեսոր Մ. Ապրեսյանի դասաժամերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել Մարիամ Վարդանի Կարապետյանի թեկնածությունը որպես անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆեսոր Մարգարիտա Հրանտի Ապրեսյանի օգնական: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի դեկանի ժ/պ և գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ.Յաղուբյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Դալալյան

26.02.2026թ.